

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

55^{րդ} ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

ԹԻ 9

22 ԱՊՐԻԼ 1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աղջիկներուն օժիթը	ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
«Մեկապարանոց» գրուածքները	ՅՈՎ. ԹԱԻՇԱՆԻԵԱՆ
Աբեղաձագն յԱմաս	ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՊԱՐՏԻԶԱԿՅԻ
Անօգուտ գեղեցկութիւն (Բանաստեղծութիւն)	ԵՂ. ԳՕԼԱՆՃԵԱՆ
Մեռած աղջկան մը վրայ »	ԱԼՖՐԷՏ ՏՐ ՄԻԻՍԷ

ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻՆ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍԸ

ՊՐԱՆՍԱՅԷՆ ԳԷՊԻ ՊՐԱԶԻՆԻԱ

(ՏՕԲԹ. ԼԵՈՐՈԼ ՔԱՐԼԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար հառաւել զրօ. եւ գաւառներուն համար յիսուն զրօ., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանք կամ 5 ռուպլի: Թղթաստացի ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու:

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշնչի պայմաններով:

Ձեռագիր կը ծանուցուի ՀԱՏԷ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ


درعليه ده غلظه ده (ماسيس) غنقه سى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաքիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople



Ծաղկաբուսական

Բերք. որ այսօր գրեթե բոլոր ժողովրդաց գիտությանը ընդհանուր դարձած է, ամենայն բաղադրված առարկաներ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բաւարար կան դժուար է լաւ ընտրութիւն մը ընել: Այդ առարկաներէն մասնաւոր նշանաւոր են իրր անորոշեալ եւ քաղցրաբոյր, սմանք ու թէեւ նոյնքան անորոշելի համ ու հաս լուին, գերազանց են սակայն իրր կաղ- դուրիլ եւ գորայուցիլ. վերջապէս իւրա- քանչիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն ունի որոնք զիւրը կը դասադասեն ու- թիւն առարկաներէ:

Սակայն կայ թէյ մը, որ այդ յատկութեանց ամէնէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համ- հոտ եւ մանաւանդ կաղ- դուրիլ եւ գորայուցիլ ան- զուգական ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ճաբա- Գի բերք, որ այդ յատկու-

թեանց շնորհիւ կը յարմարի ամէն տարի- քի ու կաղմութեան, ամէն կլիմայի եւ եղանակի եւ ամէն հաշակի:

Սաղարկեան եւ Իսաղուլեան բերք մեծ վաճառատունք, իր բաղադրված յաճախոր- դաց ծառայութիւն մը մատուցանելու հա- մար, այս առիթով մեծաքանակ ներածած է անորոշեալ գուր թէյ մատակարար եւ գեղեցիկ աւաթներով ու կը հրաւիրէ օգ- տուիլ այս առիթէն բոլոր անոնք, որ կը փոփոքին անհնաւ թէյ մը

Համով, հոտով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկա- Կան, լիեական, Սելլան եւ ճովարի ամե- նաւոր առարկա թէյներ: 9—10

Ուսաղարկիւն մարգարի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբուժ եւ կնա- ւաբան (gynécologue), Տօքթօր Էմիրզէ որ 15 տարեւան գործունէութեամբը մեծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յար- դայ յաճախորդներուն թէ անուկաբանք փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18: Բաց ի վերայիչեալ իւր մասնագիտութենէ կը բաւէ նաեւ նորագոյն մէթոտներով ջղային եւ հագեկան ու երեւակայական ամէն անոակ հիւանդութիւնները, ինչպէս նէվրոսթէնի եւ tic անուանուած աչքի երեսի եւ ուսերու ագեղ եւ ակամայ արժանւները եւ դաշտանի դադարումէ յառաջ եկած ջղային խռովումները եւ Կրիտասարդական մայիքները, ինչպէս նաեւ գինեմալիքը, մորիֆոսմալիքը եւայլն: Կիրակիներէն դառ ամէն օր կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կըն- դունի, եւ ուրբաթ օրերը ձրիաբար կը դարմանէ վկայեալ աղքատները: 9—10

ԱՐՐԱՀԱՄ ԿՏԱԻՃԵԱՆ

(Ն Ի Կ Ո Մ Ի Դ Ի Ա)

ԿԸ ԱՏԱՆՁՆԷ ազանգազութիւններ, ամէն տեսակ գոմիօնի գործեր, առեւ- արակաւ գործերու վերաբերեալ ազագր- Կան յանձնարարութիւնք՝ Կ. Պոլսոյ մէջ պատրաստելի. քաւթարվիզիթ եւայլն:

ԿԸ ՀԱՅԹԱՅԹԷ՝ ամսական վճարումով՝ Սաքսոնիայ դաշնակներ, անգլիական առ- Կան դրամադիզներ, պիտիք էթներ եւայլն: Ուղում քանակութեամբ եւ անսկզով՝ ըն- տիր ու հրատէս թէյներ:

Շրջակայ գաւառակներու առեւարական յանձնարարութիւնք եւս կը կատարուին փութով: 3—10

Հասցէ
ԱՐՐԱՀԱՄ ԿՏԱԻՃԵԱՆ — ԻՉՄԻՏ

Հիւանդութեանց դէմ ապահով է եթէ իր մէջը Հիգտնուի շիշ մը



SCOTT'S EMULSION

(ԸՍԳՕԹԻ ԲԱՆԱԴՐՈՒԹԻՈՒՆ)

Թոքախտ, պրոնշիա, հազ, հարբուխ և բարակցաւ, և տղայոց անդամներու թուլութիւն, խոլը (սըրաճա) և բոլոր արեան աղեաններու համար անգին դարման մըն է։ Բոլորին անգամ առնուելով բժշկելու կ'ըսկսի և կը շարունակէ։ Եւս տարի հազարաւոր տղայք մահուանէ ազատելու կը ծառայէ։ Հիւանդութիւններէ վերջը՝ կորսուած զօրութիւնը կը վերականգնէ, և աչքերու փայլունութիւնը ետ կը բերէ և մարմնոյ կեանք կուտայ։ Գեղերու մէջ նոր հրաշք մըն է, և ուտելիքներու նկատմամբ ալ հրաշք մըն է։ Սիշտ վրան այս պահկերով՝ վարդագոյն փաթեթի մը մէջ կը գտնուի։

Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է։

Բոլոր գեղարքները և գեղաձառները ինքնին։

26

PHOENIX ASSURANCE Ld. Co.

“ՖԻՆԻՔՍ”



ՀԻՄՆԵՍԱԼ Ի ԼՈՆԾՈՆ 1782 ԻՆ

ՅԸ ԳՈՐԾԷ Ի ԳՈՐԾՍ 1869ԻՆ Ի ՎԵՐ

ԱՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ և պահեստի դրամ

Անգլ. ոսկի 4,218,000

Ֆինիքս սոսկ հրդեհի դէմ Ապահովագրական Հիկերութիւն մըն է, ծանօթ իր պատուաւորութեամբ և փեսուց մէջ իր անմիջական վճարումներով։

Ֆինիքս կ'ապահովագրէ հրդեհի և կայծակի դէմ ամէն ահապ անշարժ և շարժուն առարկանք, յոյժ նպատակաւ պայմաններով։

Հիկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ և ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ. Ցա՛րդ վճարած է առաւել քան 27,000,000 անգլ. սկի.

Հնդկ. գործակալ Գուլթայ և գաւաւստի։

Գ. ՎԱՐԴԱՆՆԱՆ Վիքթորիա խան, Գանգ Օքսֆորդի մօտ Ղալաքիա։

Փոխ գործակալ Ի Գուլթայ

Ճի՛վԱՆ ԹԷՔԷՆԱՆ

9-10 Ֆինսկիա խան

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԱՆԲԱՍ, ՄԵՐ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դէմ

Գե. Ե. Շր. օրերը առաւօտեան կանու.

խան մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

Բե. Դե. Ուր. օրերը 6 կն մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ

9-10

ՄԱՍԻՆ

55^ր ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

ԹԻ 9

22 ԱՊՐԻԼ 1906

ԱՂՋԻԿՆԵՐՈՒՆ ՕԺԻՏԸ

(ԽՄԲԱԳՐԱԿԱՆ)

Յորմէհետէ կիներու յատուկ շարաթաթերթ մը ունինք, տեսակ մը վերապահու մով է որ կը մօտենանք զեղեցիկ սեռին վերաբերող նիւթերու գործ Մադիկի խմբագրապետուհիին ու աշխատակցուհիներուն ձեռնհասութեանը թողուլ նախամեծար կը սեպենք, ոտնձգութիւն մը ըրած չըլլալու համար անոնց փափուկ սանձաններուն մէջ: Ասով հանդերձ, առտնին կեանքի վերաբերող պարագաներ, հարցեր կան որոնց մասին այրերուն ու կիներուն կողմէ հաւասարապէս կարծիք յայտնուիլը անօգուտ չըլլալէ զատ, գործնական արդիւնք մըն ալ կրնայ ունենալ: Եւ այս հարցերէն մէկն է Օժիտը, պայմանով որ չլիւթուի Դրամօժիտին հետ, — յաւիտեանապէս ծեծուած խնդիր մը, ձաղկուած սովորութիւն մը որուն դէմ որքան աւելի գրուած է՝ այնքան աւելի արմատացած է կարծես մեր բարքերուն մէջ:

Օժիտը, — կամ գործածական դարձած բացատրութեամբ՝ «ճէհէզ»ը, — հակառակ նոյնայանգ ըլլալուն, բոլորովին տարբեր պայմաններու մէջ կը գտնուի. հարուստին ու աղքատին աղջկանը համար հաւասարապէս ռենդաթեյա է ան, համեմատութիւնները պահուելով անշուշտ, ու Եւրոպացի ընտանիքն ալ նոյնքան կը դադարէ անով՝ որքան Հայ կամ Արեւելեցի ընտանիքը:

Բարիգուհիները, — գործ սխալ ըմբռնումով մը կը նկատենք զբօսանքէ, արդուզարդէ, պարահանդէսէ ու պտոյտէ զատ ուրիշ բանով չըզբաղող կիներ, — միշտ հասակարգի աղջիկներու օժիտի խնդիրը լուրջ ուշադրու-

թեան առարկայ դարձուցած են իրենց համար. բաց ի հարուստ դասակարգի ընտանիքներէն, որոնցմէ շատեր բարեգործելու հաճելի եղանակ մը կը նկատեն իրենց համար՝ ամուսնանալու մօտ եղող աղքատիկ աղջիկներու օժիտին հոգը ստանձնել, կայ ուրիշ դասակարգ մըն ալ որ աւելի՛ գործնական ուղղութեան մը կը հետեւի, փափակելով որ միջակորեար ընտանիքի օրինորդները կանուխէն նախապատրաստուին իրենք պատրաստելու իրենց օժիտը: Այս նպատակով, թաղային դպրոցներ կան որոնք միանգամայն արհեստանոց են, եւ անոնցմէ մէկուն նկարագրութիւնը, զոր կարդացինք Բարիգեան թերթի մը մէջ, կը ներշնչէ մեզի այս տոգերը գրելու:

Տեսէ՛ք ինչ աղուոր ու նպատակայարմար կարգադրութիւն մըն է եղածը, — օրինակ առնելով այդ հաստատութիւնը որ տեսակին մէջ միակը չէ արդէն: Յօդուածագիրը, Gustave Geffroy, այցելելով Բարիգի մօտակայ այդ աղջկանց դպրոցը, կ'ընդունուի Տնօրէնուհիին կողմէ եւ կը յայտնէ իր հետաքրքրութիւնը:

— Ասկէ յարմարագոյն ժամանակ մը չէիք կրնար ընտրել, կ'ըսէ անոր Տիկին Պէկէն: Արհեստանոցը կը բանի այսօր եւ աչքովնիդ պիտի տեսնէք ու դատէք: Մեր ծրագիրը շատ պարզ է. ծաղկատի աղջիկներու մօքին մէջ ծաւալել ընտանեկան յարկին քաղցրութիւնը, ներշնչել անոնց՝ ասեղնագործութեան ճաշակը, համակրութիւն մը հաստատել աղքատիկ աղջիկներուն եւ անոնց՝ բա-

րեկեցիկ ընկերուհիներուն միջեւ, եւ վերջապէս դիւրութիւն ընծայել գործաւորուհիին՝ ինք իր ձեռքով պատրաստելու իր օժիտը:

Յետոյ, դուռ մը բանալով, Տնօրէնուհին ցոյց կուտայ այցելու օրագրողին՝ իննէն մինչեւ տասներութը տարեկան աղջիկներ որոնք կար կարելու զբաղած էին. ասոնք ամիսը կէս Փրանք կը վճարեն՝ դպրոցի սընտուկին և շաբթուան մէջ որոշ օր մը համախմբուելով հոն, կ'աշխատին օժիտի պատրաստութեան, իրենց մայրիկներուն, խնամակալուհիներուն հսկողութեան ներքեւ, մեծ մասով թաղեցի տիկիներ որոնք կերպասները ու ճերմակեղէնները կը պատրաստեն, կը կարեն, կը ձեւեն, ու պզտիկներուն մատները կը վարժեցնեն: Այդ աղջիկներէն շատերը կա'մ խանութի մը, գործատան մը մէջ բանւորուհի են, և կամ դպրոցական աշակերտուհի, բայց այդ օրուան համար արձակուրդ առնելով՝ Օժիտի կը նուիրեն ինքզինքնին:

Օժիտ ըսելով՝ այս պարագային մէջ պէտք չէ հաշուի առնենք չրջագգեստը, գլխարկը, կօշիկը, և արդուզարգի ուրիշ առարկաներ. այլ ճերմակեղէնները միայն որոնք կը բաղկանան եօթանասուներկու կըտորէ, մէջն ըլլալով մինչեւ իսկ անկողին սաւանը, բարձին ծածկոյթը, գոգնոց, անձեռոց, թաշկինակ և այլն: Այդ փոքրիկ աղջիկները, որոնք եթէ զոքաւոր չեն՝ լիովին երջանիկ ալ չեն, գէշ կը հագուին, գէշ կը սնանին, մեծ մասով խանութպանի, գործաւորի զաւկներ, տեսակ մը մանկական հրճուանք կըզգան՝ երազելով ինքզինքնին արդէն իսկ երիտասարդ ու մտածելով իրենց հեռաւոր ամուսնութեան վրայ: Ինչ պիտի ըլլայ այդ երիտասարդութիւնը, ինչ պիտի ըլլայ այդ ամուսնութիւնը. օժիտի ծրարիկը գուշակի հմայք չունի և իրենց ապագան չի կրնար ըսել, բայց հնարաւոր երջանկութեան մը, կարգուսարք գիտցող տանտիկնութեան մը խեղալը կը պարուրէ զիրենք կանուխէն: Մանկութեան սպաւորութիւնները զօրաւոր ու տեւական կ'ըլ-

լան, և այդ փոքրիկները միտքերնին պիտի պահեն, իրենց կեանքին մինչեւ վերջը, թէ չապիկ մը ինչպէ՞ս կը կարուի, ճերմակեղէնները ինչպէ՞ս կը տեղաւորուին դարակնէրուն մէջ, լավանտայի ծաղիկներով կամ անուշաբոյր հոտեղէնով մը: Տնայէն կիներ պիտի դառնան և իրենք ալ, իրենց կարգին, դպրոց պիտի զրկեն դեռատի՝ աղջիկներ՝ սորվեցնելով անոնց՝ սիրուն թաշկինակ մը պահել մաքուր ու արդուկուած գոգնոցին գրպանը: Կեանքը, իր մեծ թաղծութիւններուն մէջ, պզտիկ վայելքներով կը սփոփուի երբեմն. և առտնին հանգստաւէտութիւնը, կնոջ աշխատութիւնը ու մաքուր և կոկիկ կենցաղի մը համեստ պայմանները՝ կրնան անոնցմէ ըլլալ, այդ աղջիկներէն շատերուն համար:

Կարուսեւի Բարիզեան այս Հաստատութիւնը իր բարոյական նշանակութիւնն ալ ունի, փոխադարձ օգնութեան զգացումը ներշնչելով ընկերային տարբեր վիճակներու մէջ գտնուող էակներու, — վասնզի, այդ արհեստանոցին մէջ, բարձրագոյն վարժարանի աշակերտուհիները՝ հարուստ օրիորդներ՝ շաբթուան որոշեալ մէկ օրը, թաղային դպրոցի աղքատիկ աշակերտուհիներուն հետ աշխատելու կուգան. և այս հաղորդակցութենէն, այս կանխահաս բարեկամութիւններէն վերջիներէն ոմանց համար կըրնան օգուտներ ծնիլ ապագային:

Օժիտի դպրոցը, ամէն տարեշրջանի վերջ, մրցանակ մը կը նուիրէ էն կարող ու ճարտար աշակերտուհիին, «առտնին առաքինութեան մրցանակ» անունով, որ օժիտի ճերմակեղէններու ամբողջական ծրար մըն է, բացի իր պատրաստածէն՝ իբրեւ անդամակցուհի՝ իր ամուսնութեան թուականին կամ տասներութը տարեկան հասակին համար:

Բարիզեան յօշուածագիրը, դեռ կարգ մը շահեկան տեղեկութիւններ հաղորդելով այս Հաստատութեան վրայ և անոր օգուտները թուելով՝ ընտանեկան երջանկութեան տեսակէտով, խորհուրդ կուտայ որ այս դրութիւնը ընդհանրացուի, ժողովրդակաւ նանայ, ամէն ատիճանի աղջկանց վարժա-

բաններու մէջ ընդունուելով՝ ու նախնական
կրթութեան ծրագրին մաս կազմելով, Անոր
կազմակերպութեան հիմը կը կայանայ սա
առանձնայատկութեան վրայ, որ բարեկեցիկ
ընտանիքի մայրեր, պերճ դասու տիկիներ
իրենք երթան անձամբ հսկեն, քաջալերեն,
ուղղութիւն տան հոն:

Ահա՛ նիւթ մը, յայտագիր մը՝ որ էրիկ
մարդոց չվերաբերելուն պատճառաւ՝ նուազ
հետաքրքրեր զմեզ, վասնզի եթէ շատ մը
կիներ ու աղջիկներ չունինք՝ Մասիօն աշ-
խատակցող, ատկէ չհետեւիր թէ փօքը թիւ
մը կը կազմեն մեր ընթերցողուհիները: Եւ
անոնց դատողութեան, գննութեան կը յանձ-
նենք՝ միջակ դասակարգի կամ աղքատիկ

աղջիկներու օժիտին նախապատրաստու-
թիւնը ապահովող այս Բարիզեան Հաստա-
տութեան գաղափարը: Կարելի չէ՝ պատ-
շաճեցնել զայն մեր միջավայրին, մեր հա-
մայնքին, նախափորձ մը ընելով, քանի որ
Բերայի աղջկանց Արուեստանոցը տրամադ-
րելի է ահա՛ և ամէն դիւրութիւն կրնայ ըն-
ծայել առ այդ:

Մեր մասին, մէջտեղ դնելով այս օրի-
նակը, ուրիշ բան չենք կրնար ընել՝ բայց ե-
թէ Մասիօն էջերը տրամադրել այն տիկին-
ներուն կամ օրրորդներուն որոնք հետա-
քրքրուին այս զուտ առանին հարցով և
ուզեն կարծիք մը յայտնել՝ գործնական ուղ-
ղութեամբ:

ԱԼԲԵՐԵՏ ՏԸ ՄԵՐՍԵ

ՄԵՌԱՅ ԱՂԶԿԱՆ ՄԸ ՎՐԱՅ

Դեղեցիկ էր ան, թէ գիշերն որ լուռ
ննջէ մատուռին մէջ տխրադեցիկ՝
Ուր բոյն հաստատեց երբեմն Անճէլօ,
Թէ կրնայ գիշերն ըլլալ գեղեցիկ:

Բարի էր անի, թէ անցած ատեն
Բաւ է ձեռք բանալ, դրամ տալ ամէն դի,
Առանց որ ոչինչ իմանայ Աստուած,
Թէ ողորմիլ է դրամն առանց գութի:

Կը մտածէր ան, եթէ ձայնին մէջ՝
Որ կերգէ քաղցրիկ ու դաշնակաւոր՝
Ինչպէս գետին մէջ որ կը հառաչէ
Մտածում մը կայ լուռ, խորհրդաւոր:

Ու կ'աղօթէր ան, թէ աղօթել է
Ունենալ աչքեր քաղցր հրեշտակային,
Որոնք երբեմն երկիրը դիտեն,
Երբեմն ալ երկնից բարձունքը հային:

Պիտի ժպտէր ան, թէ որ կարենար,
Բնաւ չի ծլած ծաղիկ մը գարնան,
Ժպտիլ փափկաթե հովի շունչերուն
Որոնք կ'անցնին միշտ ու զինքը մոռնան:

Պիտի սիրէր ան, թէ դադաղին մօտ
Վառող անօգուտ կանթեղին նըման,
Հպարտութիւնը կարենար հսկել
Ամուլ անպտուղ իր սրտին վըրան:

Ու մեռաւ անոք, չապրած տակաւին,
Խեղճը շարունակ ապրիլ կը կեղծէր
Սահեցաւ, ինկաւ գիրքը իր ձեռքէն
Որուն մէջ ոչինչ դեռ չէր կարդացեր...:

ALFRED DE MUSSET

Թարգմ. ՀՐԱՆՏ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

“ՄԵՐԿԱՊԱՐԱՆՈՑ,, ԳՐՈՒԱԾՔՆԵՐԸ

(ՆԱՄԱԿ ԱՌԻՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ)

ՆԻՒ - ԵՈՐԻՔ, 10 ԱՊՐԻԼ 1908

Յարգոյ խմբագիր Մասիս

Ձեր «Գրական Նշմարներ»ը(*) կարդացի։ Ակնարկուած «Բրոնիկ»ին կարեւորութիւն տուած էք «լրջութեան սահմաններուն մօտեանալուն» համար։ Ես այդպէս նկատած չէի զայն, և տակաւին ալ չեմ նկատեր, որպէսզի պատասխանէի անոր։ Եթէ կը գրեմ՝ պարզապէս ձեր սա տողերուն համար է։—«Ի՛նչ աղէկ պիտի ընէիք, եթէ վերադառնայիք այն չրջանակին մէջ—կնոջական աշխարհը» եւայլն։ Ո՛չ, ո՛չ, բարեկամ, հազար անգամ կը նախընտրեմ որ այդ ծանօթ գրիչը ամէն շաբթու ինձմով զբաղի։ Նոր սրամտութիւններով իմ ըրածներս, գրածներս, մտքէս անցածները, երեւակայածներս կամ չերեւակայածներս քննադատէ, զանոնք ուզած չափովը ծաղրաբանէ և իր ձալակը արտայայտող ածականներով որակէ զիս։ Եւսոնց ամենքին կը ներեմ և կը խոստանամ՝ ինքզինքս կորսնուած և վերջին ծայր յուսանատ երեւոյթով մը՝ որ և է խմբագրապետի խորհուրդին առերեսագիր չուղղել, ո՛չ ալ դատարանի դիմում ընել, փոյթ չէ թէ Իզմիրբի քրոնիկագիրը «աճպարարութեամբ» գործածէ իր գրիչը։ Ասոնց ամենուն սիրայօժար ականատես կ'ըլլամ... պայմանաւ որ «կնոջական աշխարհը»—որպէս ինքը կ'ըմբռնէ զայն—ոտք չկոխէ։ Երանի թէ հնար ըլլար այս բանը։ Եւսո՛ղ, որ չեմ կրնար հաւատալ ատոր կարելիութեան, քանի որ վախնամ հասկցած է այլեւս թէ այդ է միակ հմայքը իր գրչին։ Եթէ հնար ըլլար սակայն այդ փափագիս իրագործումը, որպիսի՜ աժան գնով ձեռք անցուցած պիտի ըլլայի բան մը՝ որու մասին քիչ մտահոգութիւն չեմ ունեցած քանի տարիէ ի վեր։ Երանի՜ թէ այսպէս զբաղեալ կարենայի պահել զինքը և ապականութենէ

փրկել մաքուր լրագրութիւն մը՝ այդ գրչին անսանձ և լկտիօրէն արտադրած «լրան բաց» գրուածքներէն (որոնց նմանները թերեւս տեսնուին բարիգեան այսինչ անուն թերթին մէջ, — թերթ մը սակայն որու մէկ օրինակը գրպանին մէջ գտնուիլը չի պիտի ուզեր իր պատիւը յարգող որ և է Գաղղիացի)։—Ձի զարմացայ՝ երբ անցեալները կարդացի Պոլսոյ թերթերուն մէջ, թէ «Իզմիրի այսինչ անուն թերթը կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ՝ քաղաքին մէջ երեւցած լպիրչ հրատարակութեանց վրայ»։ Մարդիկ մեծապէս կ'աղդուին իրենց գտնուած միջավայրէն։

Եթէ պէտք ըլլար՝ հոս կրնայի տալ յոյժ յարգուած և հանրածանօթ անձնաւորութիւններու անուններ, որոնց հետ թղթակցութեան նիւթ ըրած եմ նոյն այս քրոնիկագիրին գրչին աղտոտութիւնները զսպելու կամ գէթ չէզոքացնելու համար ըրած առաջարկութիւններս, պատրաստակամութիւն ևս յայտնելով զոհողութիւններ ընելու, եթէ գործնական բան մը կարելի ըլլայ ընել այս անբարոյական հոսանքին առաջըը առնելու համար, դեռ ուրիշներ ալ անկից չի վարակուած։ Ասոնք կ'ըսեմ՝ ո՛չ որպէս զի զիս ի՛նչ բանի համար քննադատելը իմանալ ուղղներուն հետաքրքրութիւնը յագեցնեմ, — այդքան ստորնանալու չեմ յօժարիր, — մնաց որ հաստատ տեղեկութիւն մըն ալ չունիմ։ Կապ կը գրեմ, որպէս զի ինծի չի վերագրուի այն գձուձ մտածումը, թէ զիս քննադատելուն համար է որ իր գրչին աղտոտ մասը կը ձաղկեմ։ Այս մարդը իմ անունս տակաւին բերանը չառած, այո՛, անկէ բաղում ամիսներ առաջէն սկսելով, ես ատած եմ իր գրիչը, միմիայն անոր աղտոտութեանը համար։ Եւ հիմա, ըստ իմ բարի սովորութեան, առիթէն օգուտ քաղելով, երկար առն ինծի ցաւ պատճառող և մտազբաղ ընող

(*) Մասիս, 11 Մարտ 1906 (Թիւ 2)։

այս խնդիրը հրապարակ կը հանեմ, յուսալով որ սթափին իր գրիչը փառաբանողները, որպէս զի մէյ մըն ալ մէտալին միւս կողմը նային և տեսնեն թէ որպիսի՝ անբարոյակա- նութիւն կը ցուցադրեն զայս ընելով և հոն կ'առաջնորդեն իրենց համայնքին վարքն ու բարքը, և կը քաջալերեն ուրիշներ իր օրի- նակին հետեւելու... փոյթ չէ թէ անունը «Փանթէզի» դնեն:

Եւ արդարեւ, այս անձին ունեցած յա- յողութենէն չէ՞ր որ ուրիշներ ալ սկսան «լրան բաց» ոճեր գործածել, թէև ո՛չ մէկը անոր խայծը ունէր: Կ'ընդունիմ որ իր ընելու կամ նկարագրելու ոճը աւելի որոշ, աւելի անամօթ էր և այդ տեսակ բաներ սիրողներու համար շատ աւելի զուարճալի: Արդարեւ միեւնոյն մաքուր և կամ աղտոտ պատմութիւնը լաւ նկարագրողի մը բերնէն աւելի մեծ հաճոյքով կը լսեն ունկընդի- րները, քան պակաս վարժ պատմիչէ մը. սակայն պատմութեան մաքրութիւնը կամ աղտոտութիւնը միշտ նոյնը կը մնայ: Շա- տերու այս տեսակ բաներէ ախորժիլը պատ- ճառ մը չէ որ՝ պարկեշտ չըջանականերու մէջ մուտ գտած թերթ մը հիւրընկալէ զանոնք և պանծայ անոնցմով: Զօրավար Կրանդ քանի մը այր բարեկամներով չըջապատուած խօսակցութեան մէկ պահուն, ներկաներէն մէկը կ'ըսէ. — «Քանի որ հոս տիկիներն են իր կայ չեն, ձեզի պատմութիւն մը ընեմ»: — Զօրա- վար Կրանդ անմիջապէս կ'ընդմիջէ. — «Թէև տիկիներ չկան հոս, բայց ճէնթմէներ ներկայ են»: — Մեծ մարդոցմէ սովորինք և օրինակենք մեր բարքերը: «Եւրոպացւոց մէջ ալ այդպիսի հրատարակութիւններ կան» ըսե- լով չենք կրնար արդօրանալ: Անոնք միայն այս ինչ դասակարգին պատկանողներու (ո- ռոնց սիրուն անուն մը չեն տար) ձեռքը կ'անց- նին: Մենք շատ փոքր համայնք մըն ենք և ջանալու ենք Եւրոպացւոց միայն պատ- ուաւոր դասակարգին ըրածներուն հետեւիլ:

Քսաներօրդ դարու մէջ ինծի չափ քրիս- տոնեայ ըլլալը ներելի չէ եղբր: Երբոր աղ- տոտութեան սեղանին խնկարկունները կը փառաբանէին, զարմանալի չէ որ նոյն մի-

ջոցին քրիստոնէութիւնը ա'լ չափը անցուցած համարուի: Բայց մենք չենք պաշտեր Աստուած մը որ քսան դար առաջ կ'ապրէր, հապա Աստուած մը որ այսօր ալ կ'ապրի և յաւիտենական պիտի ապրի: Ինչպէս որ գրիչ բռնելը իմ ձեռքիս չի վայլեր, այն- պէս ալ քրիստոնէութիւնը բերան առնելը՝ ոմանց չի վայլեր: «Նիւ-Եօրքի avenueները parvenueներով լեցուն» կրնան ըլլալ, բայց «փողոցի անկիւնը Սուրբ Գիրք կարդալը» յիշելէ առաջ՝ սրբութենէ քիչ մը գոնէ տե- ղեկութիւն ունենալու է մարդ: Կրնայ ըլլալ որ այնպիսի բառեր երգեմն գործածելով, մարդ անզգալարար ազնուանայ. ես առա- ջինը պիտի ըլլամ զայս բարեմաղթող:

Գիտէ՞ք թէ ինչ բան զիս կը սրտմտեցնէր ամէնէն աւելի. սա ճշմարտութիւնը թէ այս անձին գրածները շատ աւելի թիւով ընթեր- ցող կ'ունենային քան ուրիշներունը: Շարա- թաթերթի ծալուած երեսներուն այն էջերը՝ ուր կը գտնուէր իր գրածը՝ զմեկիով մը կտրուած կ'ըլլային, թերթը ձեռքս հասնելէ առաջ: Վաճառատանս երիտասարդ պաշ- տօնականները բացած և կարդացած էին «մի միայն այդ գրութիւնը» և թերթը կրկին իր պահարանին մէջ դնելով ինծի յանձնած: Կը տեսնէք որ ամէն բան անկեղծութեամբ կ'ըսեմ: Խմբագիր մը (հանրածանօթ գրիչ մը) որպէս կը գրէր ինծի տարիի մը չափ առաջ — «Կը ցաւիմ ըսելու որ ընթերցող հա- օթակցութեան մէջ բուն զրականութիւնը գնահատող չի կայ: «Քրիզանթէմ տուէք մեզի կ'ըսեն»: Այո՛, «միտք մարդոյ ի չարն հակեալ է», ինչ ընենք ուրեմն, եկեղեցի- ները փակենք և վատահամբաւ տուներ բա- նանք, ժողովրդական ըլլալու համար: Ո՛չ ապաքէն առաքինութիւնն է որ օրէնքներ հաստատած է՝ զսպելու համար մարդոց դէպի չարն ունեցած հակումը, գիտնալով որ եթէ թոյլատրուի մարդոց՝ սանձարձակ հետեւիլ իրենց սրտին ուղածին, շուտ կը կործանի մարդկային սեռը: Ուրեմն՝ մեր նմանները աղտոտ ճամբաներ առաջնորդելու չենք, հապա արգելելու ենք զիրենք վայելելէ այն բաները որոնց հետեւութիւնը անբարոյացուցիչ

և կործանարար է: Կեղծ պարկեշտութիւնը (false modesty) ես ալ կ'ատեմ այնքան որքան ամենէն ազատախոհը կ'ատէ զայն, բայց ամէն բան չափ և սահման մը ունի: Մարդ արարածներուն արգելուած է մերկ երեւալ հանրութեան առջև, քոնէ քաղաքակրթեալ երկիրներու մէջ: Ամէն ինչ որ ժողովրդեան մեծամասնութիւնէն կը ծափահարուի, միթէ լաւ բան մըն է, կամ պէտք է թոյլատրուի: Ո՞վ չի գիտեր թէ այն թատրոնը որ համարձակէր իր դերասաններուն ու դերասանուհիներուն թոյլատրել աղամական զգեստով կատարել իրենց դերերը, յաճախորդներու այնպիսի բազմութիւն մը պիտի ունենար՝ որուն համար նեղ պիտի գար որ և է չէնք՝ որքան ալ մեծ ըլլար ան: Ուրեմն թողունք որ այդպիսի ներկայացումներ տրուին, կամ արգելոյնքը կեղծ պարկեշտներ նկատենք: Շատ բաներ՝ գիտենք, բայց կը խօսինք ատոնց վրայ, պարզապէս բաղմամբիւ ունկընդիրներ ունենալու մարմալէն: Վերը յիշած թատրոնս ալ չափազանց յաջող կ'ըլլար և բազմամթիւ հանդիսականներ կ'ուսնենար, բայց երբ օրէնքը՝ հազուատներ կըգտնէ դերասաններուն ու դերասանուհիներուն, այլևս հոն յաճախողներու թիւը զգալապէս կը նուաղի, առաջուան աղտոտ փայլին քով՝ տափակութիւն նկատուելով պարկեշտ ներկայացումը մեծամասնութեան կողմէ: «Բրիզանթէմ» երբ կը հազուի, կը դառնայ սովորական գրիչ մը, և օրաթերթ մը այդպիսի գրութիւններ տափակութիւն կը հռչակէ. կարդացէք այդ յօդուածները և պիտի տեսնէք թէ... հազուած են: Բայց ի՞նչ կորուսած կըլլանք երբ «Բրիզանթէմ» վար իջնէ իր ընտրած տեղէն և մէկը դառնայ սովորական մահկանացուներու: Ինքը «չուզեր եղեր զիս տեսնել քանի մը ոտք վար իջած այն պատուանդանէն որու վրայ կուզէ եղեր որ բարձրացած մնամ»: Ես իրեն չափ բարի չեմ, և ուրախութեամբ մեծաւ կ'ուրախանամ եթէ ինքը վար իջնէ այն պատուանդանէն ուր բարձրացուց զինքը «վրան բաց» գրականութիւնը! և յօժար եմ՝ իբր ողջակեզ զենուելու հոն, վարք, այնքան պոն որքան

ինքն ալ հոն մնայ իր զոհովը զբաղած, կը բաւէ որ նորէն վեր չելնէ:

Կը տեսնէք ուրեմն, Տէր խմբագիր, թէ որքան հակառակ եմ ձեր խորհուրդին: Թողէ՛ք, կ'աղաչեմ, յանուն բարոյականի, յանուն այն բաժանորդաց որոնք քոյրեր, եղբայրներ, աղջիկներ կամ զաւակներ ունին որոնց յումպէտս ապականութեան տեղի տալու հարկ չի կայ, յանուն վերջապէս մեր համայնքին բարի համբաւին, թողէ՛ք կ'աղաչեմ, որ ինձմով զբաղի և մոռնայ կիները: Եւ այս նպատակով չէ՞ միթէ որ նոր և առատ նիւթ կուտամ իրեն՝ դարձեալ ինձմով զբաղելու, այս անգամ ամբողջ տարի մը յուսամ, այս սինքն Եւ քրոնիկներու նիւթ մատակարարելու չափ ատաղձ: Դիտեմ, կարող է բանիլ և սիրուն ու զուարճալի առարկաներ պատրաստել անով, ես ալ կը կարդամ և միասին կը խնդանք ու կը զուարճանանք աւելի քան որ և է աղտոտ գրութեանքներով: Թող չի քաշուի բնաւ, այլ համարձակ գրէ ուզածը, կարճը՝ երկարը, հաստը՝ բարակը նայելու հարկ չի կայ. յարմարեցաւ թէ ո՛չ, փոթ չէ, կ'ուզէ պատուանդանին վրայ նստեցնէ զիս, կ'ուզէ անոր ստորտը կամ դժոխաց անդունդը. հերիք է որ զբաղում մը ունեանայ և մոռնայ աղտոտ գրականութիւնը և ես ու ինծի պէս շատեր, բախտը ունենանք մեր լրագրութիւնը փրկուած տեսնելու այն լիտիութիւններէն որոնց ջով մեծարողն եղած է ցարդ այս գրողը: Մարդ մը որու հետ ոչ անձամբ ծանօթութիւն ունիմ, որու անձականին հետ որ և է գործ չունիմ և ոչ ալ ունենալու կըստորնանամ, և կը յուսամ թէ ընթերցողներս կըմբռնեն զայս և գրածներս կ'անջատեն մարդէն և լսելի ընել ուզած սկզբունքս միայն նկատողութեան կ'առնեն, անոնցմէ պարկեշտները և բարոյականի տէրերը՝ իրենք ևս առիթը ներկայանալուն պաշտպանելով սոյն առողջ սկզբունքը, մինչև որ սովորին մեր գրողները՝ թէ այլևս ոչ իբրև սրամիտ՝ հապա իբրև անպարկեշտ և անբարոյական մարդիկ պիտի նկատուին վրան բաց» գրականներ արտադրողները: Այս բանը երբ իրականանայ, ես միշտ պիտի օրհնեմ

նեմ այս մարդը զիս քննադատելուն համար, և ձեզի տեղի տուած ըլլալուն որ այդ ինքն բազրականը գրէք, որ իր կարգին տեղի տուաւ ինծի զայս գրելու:

Բառ մըն ալ աւելցնեմ՝ ապացուցանելու համար որ ես ամենուն դիւրութիւնը կուզեմ, այնպէս որ այս գրածներէս ալ երբ բան մը չի կարենայ հասկնալ, գիտնայ թէ ո՛ւր դիմելու է: Կը գրէ, ակնարկելով իմ մէկ գրածիս—«Այս տողերուն վրայ շատ մտածեցի, բայց տակէն չի կրցայ ելլել, կը հաւատամք ասոր»։ Ի՞նչու չէ, ես կը հաւատամ ատոր: Ապացոյց: Իր անմիջապէս ետքը գրածները, իբր բացատրութիւն իմ գրածիս, որոնք աներկբայ կը հաստատեն թէ ո՛չ տակէն կըրցած է ելնել և ո՛չ ալ վրայէն: «Խալիճի»ն, ինչպէս ինքն ալ կ'ըսէ, գրագէտին հասկանալի ըլլալու լեզուով կարող չէ գրել: Բայց կը զարմանամ որ այսքան սրամիտ մէկը ինչպէս մտքէն չէ անցուցեր անգամ մը գրածս տանիլ ցուցնել անկիւնի հայ նպարավաճառին: Կ'երաշխաւորեմ որ այդ փոքրիկ առուտուրի մարդը իր «շատ մտածած» բայց տակէն չեկած» ըսմանայն դիւրութեամբ պիտի բացատրէ իրեն, և պիտի պարզէ թէ «յանուն սիրոյ չաստուածին Պ. Թաւշանճեանի ըսածը ատկէ (իր մեկնաբանածէն) ուրիշ նշանակութիւն ունի, շիտակը ըսելով»: Այն ատեն պիտի համոզուի որ «Բարոյականը յայտ կոյս և յանկոյս Ատլանտեանի» թէեւ միեւնոյնն է, բայց բարոյականն ու անբարոյականն է որ յիշմիր եւ յայլ քաղաքս միեւնոյն բանը չեն, կամ պէտք չէ որ ըլլան (անշուշտ չնորհքով մարդոց համար): «Մարդ մը որ գրելու կոչում չունի, զօրով գրագէտ չըլլար».—շատ ճիշդ է, բայց ինչպէս միշտ ըսած եմ՝ կը կրկնեմ որ իմ ըրածս գրականութիւն չէ, ես կ'աշխատիմ կոր բռնի բարոյականացնել մէկը որ չախորժիք անկից, եւ սակայն կը յուսամ եւ կ'աղօթեմ որ յաջողիմ: Այս ալ իմ «բարոյականի դաս»ն է, զոր ձրի կուտամ կիրակի օրերը, երբ շաբաթուան լուր օրերու մէջ «խալի» ծախելէ ձանձրացած՝ քիչ մը յօդոթիւն առնել կ'ուզեմ:

ՅՈՎՀ. Ս. ԹԱԽՇԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»,

Սիրայօժար հրատարակելով նամակածեւ յօդուածը Տիար Թովհ. Թաւշանճեանի, —զոր ընտելացանք նկատելու ո՛չ միայն իբր գրածներէն վաճառական, այլ և իբր գրչի տէր վաճառական, որուն տեսութիւնները, դիւրողութիւնները, փորձառութեան և հասուն մտքի դատողութեան դրոշմը կը կրեն,— բան մը չունինք աւելցնելիք մեր կողմէ: Ինքը իր որոշ սկզբունքներէն ու առողջ գաղափարներէն կ'առաջնորդուի, որոնք ակնյայտնի կը ցայտեն իր ամէն մէկ գրուածքին մէջ: Այս անգամ, առանց մեծ կարեւորութիւն մը տալու իր դէմ ուղղուած գրչի ծանօթ յարձակումին ու անճաշ հեգնութիւններուն, —որոնք ինչպէս հոս՝ Իդմիրի մէջ ալ չենք կտրծեր որ տպաւորութիւն մը թողած ըլլան, նոյնիսկ ժամանցի համար, —ձեռք կ'առնէ «վրան բաց» հրատարակութեանց խնդիրը որ էական է մեր լեռագրութեան համար՝ ընկերային, բարոյական ու ընտանեկան տեսակէտներով: Տիար Թաւշանճեան Նոր Աշխարհի մարդոց յատուկ ինքնատիպ պարզութեամբ մը կ'ըսէ. «Լաւագոյն կը սեպեմ որ ինձմով զբաղիս, ուզածիւ չափ, քան թէ մերկապարանոց ու գայթակղական բաներ գրես»: Ահա՛ առաքինութիւն մը որ ամէն մարդու տրուած չէ, մանաւանդ առաջնակարգ դիրքի տէր անձի մը՝ որպէս է յարգելի յօդուածագիրը: Եւ անկեղծապէս ուրախ պիտի ըլլայինք, եթէ հաշտ ունենդրութիւն մը ընծայուէր իր բարի խորհուրդին, որուն հետեւելով՝ ո՛չ քրոնիկագիր մը ո՛չ ալ թերթ մը բան մը չեն կորսնցներ, ինչպէս փորձը մենք իսկ տեսանք վերջին գրեթէ մէկ տարուան միջոցին՝ հրաժարելով հիւրընկալելէ գրուածքներ որոնց մէջ պարկեշտութեան սահմանները սոսնակոյս կ'ըլլային՝ ֆանթեզիի պատրուակին տակ: Եակոբ Պարոնեան, մեր անզուգական ու տաղանդաւոր երգիծաբանը, կնոջական ու վրան-բաց նիւթերու պէտք չունեցաւ՝ իր արդար համաւը չանելու և պատուական յիշատակ մը ձգելու համար:

ԱՆՈՉՈՒՅՑ ԳԵՂԵՅԿՈՒԹԻՒՆ

«Գեղեցկութիւնն ի՛նքն է, ի՛նք» , կ'ըսէին երբ կ'անցնէր ան ,
«Պայծառ ճակատ , գիծեր՝ նուրբ , դաշնակութիւն արձանի .
«Բայց , մինչ հովը կը փչէ , վերարկու մը չունի վրան ,
«Միակ ժաքէթն է մաշեր , կօշիկին մօրթ գոյն չունի» :

Ուրիշ զուարթ աղջիկներ կը հծծէին , «Տե՛ս , ի՛նչ փայլ .
«Յուճքի վայրի կեռասի տյտին վրայ կը խաղան .
«Բոցն իր մօտու չրթունքին գծէ աղեղ մ'իտէալ ,
«Սակայն չունի բնաւ ձեռնոց , փողկապ , օձիք . խեղճ տղան» :

Ուրիշ հարուստ աղջիկներ կը մնջէին . — «Ի՛նչ նայուած ,
«Շողի՛ է , ցօղ դիւթական կամ բիւ ժանեակ մը վճիտ .
«Կարծես լո՛կ ի՛ր աչքերով պիտի սիրէր , հոս , Աստուած .
«Սակայն աղքատ կ'երեւայ . լո՛կ աչքերն են իր մարգրիտ» :

Ուրիշ տեղէ նոյն մնջիւնն յանկարծ կ'ելլէր . — «Ո՛վ է սա
«Սաթի , վարդի ու յարդի նշոյլներով կը վառի .
«Վայրի հօւրի մ'անտառի փթթած առուէ մ'հեզգստան .
«Բայց մազերու ոսկիով , ա՛հ , չէ՛ որ մարդն հոս կ'ապրի» :

Ուրիշ կոյսեր անառակ կը փսփոսային իրարու .
«Մեր ժանեակէն իսկ ա՛լ ջի՛նջ է մերկ՝ վիզն իր կարապի ,
«Ու մեր ազնիւ սնդուօին հետ կը մրցի մօրթն աղու .
«Բայց ժանեակի թել մ'իսկ սո՛ւղ է իր ձորձէն աւելի» :

Ուրիշ ձայներ խօլ , անգութ կը թռչէին ետեւէն .
«Խե՛ղճ թափառիկ Սէր , հո՛ւրի , յարդէ գլխարկովըդ հին .
«Գեղեցկութիւն , ո՛ւր էր որ այդ խօլ ոգին անօրէն
«Ժպիտի մը լոյսին մէջ ներէ՛ր թշուառ հագուստին . . . » :

* * *

Բալե՛ց քալե՛ց խեղճ տղան : Իր ոտնաձայնն երկիւղոտ
Մետաքսակուռ շղարչներու շրշիւնին մէջ կը մարէր . . .
Բալե՛ց քալե՛ց , հերքն հովին , սիրտը լուսնի պէս աղօտ ,
Հորիզոնին կաթին մէջ թաթխած նայուածքն , համա՛կ սէր :

Իրիկուններ , մանաւանդ , վերջալոյսի պահերուն
Ուր ամէն բան իր վերջին ինքնութեան մէջ կը ցցուի ,
Ուր բացարձակ կը ցայտէ ամէն գիծ ու ամէն գոյն ,
Ի՛ր լուռ հոգին կ'որոշուէր հուր աչերէն իր ծաւի :

Անտառի մ'եզըր կանգուն , վերջալոյսին հետ մինակ ,
Անտառին գաղջ Աւիչին ու թաւիչին հետ վայրի ,
Արցունքի մէջ՝ կը դիտէր ճամբու գիծերն իր — ցամաք
Դօս երակներ՝ ուր ո՛չ մէկ սէր գոյն կուտայ ու կ'ապրի :

Ու նայուածքին տակ հզօր քաղաքն ամբողջ կը փայլէր .
Ճամբաներուն եզրը ցից՝ քար չէնքերու քա՛ր հոգին .
Ամայութիւն սրտի, փա՛կ պատուհաններ, փա՛կ դռներ .
Տանիքներէն վեր, մինա՛կ, կը խայտայ բոցն երկինքին . . . :

Հանին, ահա՛ , լո՛ւռ , քէնոտ, պատկառելի մենամուլ,
Սե համրիչով կը համրէ գաղտնիքներն իր տխրութեան ,
Տեսնելով շուրջն ամէն ոք վատթարացած, հիւանդ, խօլ,
Սէրը զոհուած դրամին ու Արուեստին՝ Բնութեան ձայն :

Ահա՛ զոյգեր որ զիրար կը հերքեն ա՛յնքան յայտնի .
Մէկն ալեհեր, խորշոմած, մինչ միւսը թա՛րմ, վարդահէ՛ւ .
Համրոյր փնտռէ մէկուն շուրթ, կը հաղայ միւսն, ա՛հ, գաղտնի . . .
Մէկն իր թեւեր բանայ լա՛յն, միւսը ծալլէ խաչաձէ՛ւ :

Գեղեցկին կամքն անըսպառ , տիեզերական ու թաքուն ,
Իր բոցահեր թըռիջքին, լոյս խոյանքին մէջ վա՛յրի ,
Կը թալթալի, հեծէ խուլ, տուայտանքին մէջ հեռուն ,
Ամէն անկիւն ընդհատած ձևատեղծ շունչն որ կ'այրի՛ :

* *

Անտառին եզրը կանգուն , վերջալոյսին հետ մինակ
Արբիւռ կ'ըմպէր հեռուն կրակներուն գո՛ղտը հայեաց .
Ծիրանարտօ՛ւր ու աղու այդ հայեացքին դէմ կանգնած ,
Կը հարցնէր . « Լո՛ւռ Անհունն արդեօք յի՛շէ իմ հոգեակ » :

Ու կանգնագեղ անտառին չրչիւն , վայրի գրգանքով .
Ոսկի ցոլքերն ոստերուն՝ մորթին վրայ ոստոստուն ,
Ըսել տային՝ չսիրուած լուռ գեղեցիկ պատանւոյն .
« Անմահ Աւիչն յի՛շէ՝ խանդն երակներու սիրախռով » :

Խաղիւներուն դէմ ծովուն, ի՛ր մէջ ի՛ր մէջ յար Ժպտուն
— Նունուֆարներ լո՛յս՝ ծնած անտառներու խաւարէն —
Խանդաղատած, փրփուրին կը հարցընէր մեղմօրէն
« Ա՛հ, կը յի՛շէ ծովն արդեօք ուրախութեան կամքս անհուն » :

Ու վերջալոյսն ու անտառն ու ծովն, երեքն համերանգ,
Ու համազօր ինչպէս են լուռ տեսիլներն Անհունին,
Հրապոյրով մ'անսահման կը կանչէին պատանին .
Հուրքէն, ալքէն, չրչիւնէն՝ թըռէր մէ՛կ ձայն ու մէ՛կ յանգ :

« Դարձի՛ր դարձի՛ր մեր գոյնին, — մեր հուր տարրին հերարձակ ,
Մեր մէջ միայն գեղեցիկն անդուլ անխոնջ կը գործէ .
Եթէ գիտնաս սիրել մեզ, վերջին նայուածքդ անյազ
Յաւերժանա՛յ պիտ' անթարթ, մեր հեշտանքին հետ բոցէ :

Ու պարմանին հերարձակ ու պարմանին մոլեղին ,
Իր քամակը դարձուցած քաղաքներուն դէմ, հո՛ն ուր
Գեղեցիկը, գոյնն հոգւոյն, երկա՛ր հեծէր պիտի լուռ,
Յնորքին մէջ իր սիրոյն, պի՛րկ խոյացաւ ալիքին :

Շարժեց բազուկն ընդ առաջ, կանչելով հուրքն հեռաւոր .
Ալիքներուն ծիրանւոյն վըրայ դըրաւ շուրթն, երկա՛ր ,
Ու լքումին մէջ հեշտին, լո՛ւռ սպասեց մինչև որ
Ծիրանին, Մայր գեղեցիկին, փակեց աչերն հեշտասառ . . . :

ԵՊԻԹԻԱՐԴ ԴՕԼԱՆՃՅԱՆ

ԱՐԵՂԱԶԱԳՆ ՅԱՐՄԱՇ

(ԿՅԿՏՈՒՐ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ)

Հին ատեն տխմարութիւն մը կար և այս տխմարութեան հետեւողներ կային, որոնց հիգն ու ջանքն էր գտնել Փիլիսոփայական Բարը:

Փիլիսոփայական Բարը գտնելով մարդ երջանիկ պիտի ըլլար, ուզածը պիտի գտնէր, ուզածը պիտի վայելէր, և եթէ հիւանդանար, Փիլիսոփայական Բարին նայելով՝ պիտի բժշկուէր: Մոլեգնութիւն մըն էր այս, ախտ մը՝ որմէ զերծ չէին եղած մինչև իսկ իմաստուն կարծուած անուանի անձեր:

Փիլիսոփայական Բարին հետամուտները գիշերն ու ցերեկն իրար կը խառնէին, իրենց առողջութիւնն ու հարստութիւնը՝ եթէ երբեք ունէին, կըսպառէին և կը փճացնէին: Շատ անգամ այդ Բարը գտնելու համար տուն տեղ կը լքէին, կը թափառէին կը դեգերէին, ծակէ ծակ կը մտնէին, օրերով գիշերներով խաւարամուտ և անտես կ'ապրէին: Միակ մէկ բանով կը զբաղէին, — քրքրել հողը, ողորկ ու անտաշ քարեր զննել, իրարու չփել ու չփշփել, լոյս ցոլացնել և...:

Բայց հրաշալի Բարը գտնելը և գտնողին միայն բաղդի տէր ըլլալը խնդիր չէր, այլ վէճ ալ կար թէ Բարը գտնողին կամ վայելողին միայն պիտի աղդէր, իր հրաշափառ զօրութիւնն ուրիշներու ալ պիտի չներգործէր, իր ազդեցութիւնը սահմանափակ պիտի ըլլար: Այս ալ խնդիր մըն էր:

Ի զուր լուրջ մտքեր զգուշութեան յորդորներ ու քարոզներ կը տեղային՝ այդ Բարին չհետապնդել, մտիկ ընող չկար: Ատեն մը մինչև իսկ եկեղեցական արգելքներ ու բանադրանքներ իրարու յաջորդեցին, բայց դարձեալ մտիկ ընող չեղաւ, միշտ Փիլիսոփայական Բարը փնտռուեցաւ, և ինչպէս կը լսուի, մինչև ցարդ դեռ փնտռողներ կան, մանաւանդ վանական խորհրդու և նկուղներու մէջ:

Այս Փիլիսոփայական Բարը փնտռողներէն մէկն ալ, ինչպէս կը կարծուէր, Արմաշ ա. պատանած էր: Բայց սխալ էր այս կարծիքը, վասն զի այս մարդը Փիլիսոփայական Բարը գտնելու համար չէր որ Արմաշ եկած էր: Երկար ատեն ասդին անդին թափառած էր, բնաւ հանդստութեան երես չտեսնելով, և տեղ մը տիտիկ ըրած չէր, այլ ինչպէս ինք կը պարծէր, միտքը դրած էր իր սրտին սիրական անգին քարը տեղ մը տեղաւորել, այսինքն իր արհեստին ԳԱՂՏՆԻՔԸ ի յայտ բերել և ամենախոյոր հռչակ մը հանել:

Կը պնդէր ան թէ ինք Փիլիսոփայական Բարը փնտռողներէն չէ, և թէ թափառող տուրքիւնն ու ցեղերկեցութիւնը այդ քարը գտնելու մոլեգնութենէն չէ, այլ իր աստուածատուր քարը ապահով տեղ մը տեղաւորելու նկրտած էր: Եւ հուսկ ուրեմն Արմաշը գտած ըլլալէն գոհ, զինքն այլևս երջանիկ համարած էր: Այս մարդն էր որ կամացուկ կամացուկ քալելով, և գաղտուկ մը վահան վարդապետի սենեակին դրանը կը զարնէր:

«Թըք, Թըք»:

— Ո՞վ է ան,

«Թըք, Թըք, ես եմ»:

— Ո՞վ էք դուք:

«Երջանիկն եմ»:

— Երջանիկ:

«Թըք, Թըք, այո՛, և ես եմ»:

Վահան վարդապետ խելայեղ կը բանալ դռնակը և ահա, ո՞վ մեծի զարմացման իւրոյ, Պապա Համբարձումն էր, անուանի նօթածին, և կը պագտուի ին: Յետոյ կըսկսի խօսիլ Պապան.

«Գիտե՞ս թէ ես ի՞նչու երջանիկ եմ»:

— Տխմարութենէդ:

«Կատակը մէկդի, գիտե՞ս թէ ես ի՞նչու երջանիկ եմ»:

— Ինծի պէս խման մը ըլլալուդ համար:

«Ո՛չ, գիտե՞ս թէ ես ի՞նչու երջանիկ եմ»:

— Պէ՛ ճանճմ, ըսէ՛, լմննայ երթայ:

«Երջանիկ եմ, վասն զի ես քեզ գտայ»:

— Զի՛ս:

«Այո՛, վասն զի չես գիտեր թէ ի՞նչ կար

փորձութիւններու ենթարկուեցայ հոս գալէս առաջ : Ահ, բաւ չէր որ հալածուէի Նիկողոս Թաշեանէ մը, իբր թէ ան ըլլար քաջ երաժշտագէտ :

— Ան մեռաւ :

«Աստուած լուսաւորէ հոգին Անոր քենեկալէն՝ Ստեփան փափազեանէն ալ» :

— Ան ալ մեռաւ :

«Տէր լուսաւորէ հոգին, և Ներսէս Պատրիարքէն» :

— Ան ալ վախճանեցաւ :

«Ի՞նչ. ասոնք մեռան» :

— Այո՛ :

«Բայց ես կենդանի եմ նէ» :

— Կենդանի ըլլալուդ համար :

«Ձգէ՛ սա կատակը, մեռան» :

— Այո՛ մեռան, բայց ըսէ՛, դուն իրաւ գտա՞ր Փիլիսոփայական Բարը :

«Օհօ՛, ապուշները իմ թափառոտ դեգերոտ կեանքէս ու տեղ մը տրտիկ չընելէս կը հետեցնէին, թէ ես փիլիսոփայական Բարին հետամուտ եմ և զայն գտնելու մոլեգնութեան մէջ եմ : Այո՛, ապուշները, ես ոչ քար—մար փնտռող եղած եմ, և ոչ անոր հետամտող : Հալածուեցայ և միշտ հալածուեցայ մերիններէն և գիտե՛ս ինչու :

— Ձիտեմ :

«Վասն զի անոնք կը կարծէին թէ ես Փիլիսոփայական Բարը գտեր և զայն ծրարեր պահեր եմ եւ ոչ ինծի ու ոչ ուրիշներու օգտին զայն կը գործածեմ. ապուշները» :

— Գուցէ :

«Այո՛, ես թանկագին քար մը ունիմ, հանձարիս քարը, այն է զոր ես խնամով կը պահեմ և չեմ ուզեր ըստ բանի Տեառն զայն արկանել առաջի խոզաց» :

— Իսկ հիմա՞ :

«Հիմա որ ա՛լ ծերացած եմ, մահս մօտ է, կ'ուզեմ այս գոհար քարս ի տես աշխարհի հանել և գոռալ հակառակորդներուս երեսին. «Փիլիսոփայական Բար աւասիկ առէք, տեսէք, և ամչցէք» :

— Բայց...

«Բայց —մայց չկայ՝ ահա՛բուն գաղանձք. դայի» :

մեր ձայնանիչները, որք դարերէ ի վեր կորսուած էին, իջկործը, Բեկործը, Տկլոծը, Նայն, Ծայդանը, Դայթանը, Կեռը, Ծեռը...

— Եւ ի՞նչ :

«Մի՛ կատակեր. այս ձայնանիչները թող գործածուին, և ա՛լ թող լռեն եւրոպական Օռկը, Տոռկը, Գոգոռը և Բիանօն» :

— Եւ Բիանօն :

«Մի՛ կատակեր, թո՛ղ մերիններն ալ երգեն եռաձայն, քառաձայն և... բարձրաձայն, ցածաձայն, մեղմաձայն, սրաձայն և...» :

— Եւ քառատորփ ոտնաձայն :

«Մի՛ կատակեր. և զիս թող փառաւորեն ի ձայն սրնգի, տաւղի, քնարի և ամենայն ազգաց արուեստականաց» :

— Իբր Նաբուգոդոնոսորի պատկե՛րն զքեզ փառաւորեն :

«Այո՛, բայց ես ալ, աւա՛ղ, այդ պատկերին պէս փշրուեցայ, վասն զի հազիւ թէ այս վանքին մէջ ոտք կոխեցի և փիլիսոփայական քարիս հետ խաղալ և զայն քիչ շատ ցոյց տալ սկսայ, և ահա՛կրակը վանքին կէսը մոխիր դարձուց» :

— Այդ բան մը չէ. քարիդ լիւսս մը չի տար :

«Այո՛, ուղիղ ըսի՛ր, այս բան մը չէր, աւելին կար : Վանահայր Աշըքեան՝ Պատրիարք եղաւ և Օրմանեան Սրբազան՝ վանահայր» :

— Ա՛լ աւելի աղէկ :

«Ա՛լ աւելի աղէկ. տխմարութիւն պէտք չէ. Օրմանեան Սրբազան գոնէ Աշըքեանի կիսուն ու քառորդին չափ կրնայ գիտնալ քարիս յըյմէքը» :

— Ի՞նչու չէ :

«Ձայնադրագէ՛տ է» :

— Գոհար քար մը գնահատելը, աղամանդի մը յարգը գիտնալը միայն գուլումճի՛ր յատուկ է :

«Բայց դուն ի՞նչու հոս եկար» :

— Ձլսեցի՛ր որ կոնդակ մը հրատարակուեցաւ որ զիս կը զրկէր եկեղեցական պաշտօնավարութենէ :

«Ձեմ լսած, ականջներս ե՛րբ վրաս եղած են» :

— Ձկարդացի՛ր լրագիրները :

«Աչքերս ե՛րբ զգաստ եղած են, որ կար :

«Այս կոնդակը ամէն եպիսկոպոս ու վարդապետ և քահանայ կարդացին, միայն Օրմանեան Սրբազան չկարդաց՝ երբ Գարա-կէօմբիւկի ժամուն քարոզիչ էր: Հիմակ ե-կած եմ անոր երախտագիտութիւնս յայտ-նելու»:

— Ինծի նայէ, պապաս, ես ալ դուն ալ անոր թելին տակ մտնելու պէտք ունինք: Ալ ոչ քեզ և ոչ ինձ այս վանքէն դուրս ապաստան չկայ: Երկուքնիս ալ խաչի Բարե-կենդանի գիշերը հանճարնիս կը փայլեցնենք — ես գեղազուարճ առակներով, դուն ալ գեղազուարճ նոթաներովդ: Ալ մենէ վանք ու միաբանութիւն կրնա՞յ միթէ վազ անցնիլ:

«Ես ի՞նչ կրնամ ընել»:

— Դուն մարդերուն անասունի բերնով երգել կուտաս նոթաներովդ, ես ալ անա-տուններուն մարդու լեզուով խօսիլ կուտամ առակներովս:

«Սքանչելի՛. բայց ես ի՞նչ կրնամ ընել»:

— Աչկերտնե՞ր չունի՞ս:

«Ունիմ, Կոկոսն ու Թոթոսը կան»:

— Անոնց իշաձայն եղանակ մը կը նո-թագրես եւ երգել կուտաս փառաւորապէս, և ես ալ կ'առակեմ:

«Սքանչելի՛ գիւտ, աղէ՛կ»:

— Ահա՛ այսպէս փիլիսոփայական քարիդ հրաշալի զօրութիւնն ի ցոյց դրած կ'ըլլաս, և աշխարհ ինչպէս կը հաւատայ թէ Բրիս-տոսի մէկ խօսքով կոյրերը կը տեսնէին, կաղերը կը վազէին, բորոտները կը սրբուէին, ծով և մրրիկ կը հանդարտէին, թո՛ղ հաւատայ նաեւ թէ Պապա Համբարձումիդ զօրութեամբ մարդերը կրնան իշու պէս երգել:

«Եւ պարե՛կ»:

Եւ արդարեւ, Պապա Համբարձում 1890ին Մեծ—Սաչի Բարեկենդանի գիշերը, վանքի սեղանատան մէջ երբ վանական միաբանու-թիւնն ամբողջ եւ ժառանգաւորք կ'ուսէին կը խմէին կը զուարճանային ու կը ցնծային, կ'երգէին ու կը ճառէին, յանկարծ եղանակ մը լսուեցաւ: Ամէնուն աչերն ապուշ ապուշ դէպ ի սեղանատան դուռը սեւեռեցան զար-մացած թէ ինչպէ՛ս էշերն իրենց ախոռներէն դուրս խոյանալով եղանակաւոր կ'երգէին:

Ուր ուրեմն ի տես այս սքանչելեաց՝ Օրմանեան խնդալէն մարեցաւ, իսկ միւսները, Արսէն վարդապետ մանաւանդ, ճաթեցան ու պատուեցան:

Պապա Համբարձում յաղթանակը տարած էր: Եւ յաղթական պսակն եղաւ մարմա-րիոն մը, զոր իր գերեզմանին վրայ դրաւ 1906ին Թորգոմ վարդապետ, արդի փոխ-վանահայրը, սա դրուագը փորագրելով.

«Այս է տապան հանգստեան
Պապա Համբարձումի Չէրչեան
Որ ի լեզու իշոյ
Երգել տայր մարդոյ.
Իան զՈրփէոս(*) կիրթ ի նուագ
Հայ ձայնագրին ներդաշնակ»:

ՎԱՆԱՆ ՎՐԴ. ՏԷՐ—ՄԻՆԱՍՍՆ

(*) Որփէոս նշանաւոր նուագահար, որ քարերն ու ժայռերն անգամ իրենց տեղերէն կը խախտէր իր թունտ ձայնին ազդեցու-թեամբ:

ՊԻ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ՓԵՓՍԵՄԱՆԻ

Ընտիր հաւաքածոյ մը կրօնային բանաս-տեղծութիւններու: — Դին 6 դր.

Կեդրոնատեղին է Կ. Պոլիս, Թ. Մատ-թէոսեան Թղթավաճառանոցը, Ֆինճանճըլար Եօքուչու, թիւ 27: — Կը գտնուի նաեւ Պ. Պալենց գրատունը, Չաքմաքճըլար, թիւ 21: Եւ հեղինակին քով, ի Թարսուս, Տար-սոն Դօլէճ:

3—10

ՆՈՐ ՀՐԱՏՈՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Վ. եւ Հ. Տէր—Ներսէսեան Տպարանէն լոյս տեսաւ՝ Վեր. Գ. Ն. Շիշմանեանի թարգ-մանութեամբ՝ ՏԱՐԵՐԻՒ ԱԻԵՏԱՐԱՆԻ գործը — ճաշակաւոր սիրուն հատոր մը:

* * Ստացանք, Սուրհանդակի Տէր եւ Տնօրէն Տիգրան էֆ. Ժիվէլէկեանի որդւոյ՝ Պ. Ա. Ժիվէլէկեանի երաժշտական երկրորդ հեղինակութիւնը, Reverie, մեղմօրօր վաճ-մը դաշնակի համար ձայնագրուած:

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍԸ

Օրաթերթերը, իրենց ընդարձակ նկա-
րագրականներով, նոր բան մը չթողուցին
մեզ գրելու ապրիլ 16ի Նուադահանդէսին
վրայ որուն գեղարուեստական յաջողու-
թիւնը նոյնքան գնահատուեցաւ հայ և օտա-
րագրի երկսեռ հանդիսականներու ընտրեալ
բազմութենէն, որ կիրակի օրը լեցուցած էր
Բըթի-Շանի թատրոնը, որքան ընդհանուր
գոհունակութիւն պատճառեց անոր նիւթա-
կան արդիւնաւորումը, հազար ոսկիի մօտ,—
եթէ ոչ աւելի,—նպաստի գումար մը հայ-
թայթելով Գթութեան այդ մեծ ու բազմա-
կարօտ Յարկին:

Հանդէսն սկսաւ Կայսերական Քայլեր-
գով, զոր հնչեցուց Պ. Նավայի Նուադա-
խումբը, և որ յոտնկայս ունկնդրուեցաւ
բոլոր ներկաներէն ու ծափահարուեցաւ:
Յետոյ, յայտագրին մէջ նշանակուած երա-
ժշտական հատուածները նուազուեցան ու
երգուեցան՝ ամորժալուր ու ճարտար:

Աջակողմեան պատուոյ օթեակին մէջ բազ-
մած էր Քաղաքապետ Բարձր. Բէլիտ փաշա
որ Նուադահանդէսի բացման պահուն եկաւ
ու մինչև վերջն ալ հաճութեամբ ունկնդրեց,
գոհունակութիւն յայտնելով: Նոյն օթեակին
մէջ պահ մը ներկայ գտնուեցաւ նաև Բե-
րայի կառավարիչ Վսեմ. Համտի պէյ: Պե-
տական այս բարձրաստիճան պաշտօնատարը
ընդունուեցան և մեծարուեցան՝ Մաքսուտ
Սեպուհ պէյի, Գաբրիէլ էֆ. Նորատունկ-
եանի, Տիգրան էֆ. Եռսուֆեանի, Յա-
րութիւն էֆ. Ասլանեանի, Տիգրան էֆ. Տէր-
ներսէսեանի և Պատրիարքարանի աւագ
գործակատար Արիս էֆ.ի կողմէ: Բիչ ետքը
եկաւ նաև պարսկական դեսպան Միրզա
Բիզա Սան՝ խորհրդական Յովհաննէս Սանի
և դեսպանատան զինուորական կցորդին
հետ, ու ձախ կողմի պատուոյ օթեակին մէջ
մեծարուեցաւ Գրիգոր Սան Շամտանճեանի,
Մկրտիչ էֆ. Էսաեանի, Մարդէն էֆ. Յա-
կոբեանի և այլոց կողմէ:

Նուադահանդէսին յաջողութիւնը, մաս-

նաւորապէս, կը պարտինք Կարգադիր
Մասնախումբին որուն կը նախագահէր Վսեմ.
Մաքսուտ Սեպուհ պէյ և կ'անդամակցէին
Գրիգոր Սան Շամտանճեան, Մարդէն էֆ.
Յակոբեան, Տիգրան պէյ Կիւմիւշկէրտան,
Յարութիւն էֆ. Ասլանեան, Արսէն էֆ.
Արսէնեան, Մանաս էֆ. Բէյիզեան և ուրիշ
յարգելի անձնաւորութիւններ, որոնք՝ վեր-
ջին երկու շաբաթներու միջոցին՝ իրենց
անձնական զբաղումները զոհելով, թէ՛ տոմ-
սակներու սպառման և թէ՛ երաժշտական
մասին կազմակերպման ու հանդէսին կանո-
նաւորութեան համար հնար եղած ամէն
չանք նուիրեցին, որուն համար ջերմապէս
շնորհաւորելի են: Հաճոյք մըն էր նաև
տեսնել, Նուադահանդէսին օրը, բարեկեցիկ
ընտանիքներու պատկանող խումբ մը անձ-
նուէր երիտասարդներ՝ Հրանտ և Զարեհ
Շամտանճեան Սան, Հրանտ Էսաեան, Հրանտ
Շահպազ, Օննիկ Գարանֆիլեան և Աւետիս
Կիւլպէնկեան էֆ.ները որոնք կենցաղա-
գիտօրէն կը կատարէին հիւրամեծարութիւնը
հանդիսականներուն, ամէնքն ալ գոհ ձգելով:

Օր. Նուարդ Մուտովաք, միակ amateur
հայ աղջիկը որ մասնակցեցաւ Նուադահան-
դէսին, անգամ մըն ալ ցոյց տուաւ իր կան-
խահաս ճարտարութիւնը և բնածին տա-
ղանդը ջութակահարութեան մէջ, ահլերջ
ու խանդավառ ծափահարութիւններ ստա-
նալով՝ երկու փառաւոր ծաղկեփունջերու
հետ: Նոյնպէս, Օրիորդ Օլկա Քօհան՝ գե-
ղաձայն երգչուհին: Պ. Մանասի վարած
խումբը զոր կը կազմէին «Կալլիա» ընկե-
րութեան երգչուհիներն ու երգիչները,—ո-
րոնց մէջ, եթէ չենք սխալիր, հայ երիտա-
սարդներ ալ կան,—հրապուրիչ մասերէն
մէկը եղաւ ցերեկոյթին, Պ. Նավայի երա-
ժշտախումբին հետ:

Ու հանդիսականները մեկնեցան իրապէ՛ս
ախորժելի տպաւորութեան մը ներքեւ, եր-
թալ վայելելու գարնային գեղազուարճ օդը՝
շաբաթ գիշերուան անձրեւէն ետք փայլող
տաքուկ արեւին ու կապոյտ երկնիքին տակ,
որ այնքան հրապուրիչ կընծայէր Բերան ու
Վոսփորի գիւղերը:



ՖՐԱՆՍԱՅԵՆ ԴԵՊՈՒ ՊՐԱԶԻԼԻԱ

(ՏՈՔԹ. ԼԵՈՒՐՈՒ ԳԱՐԼԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ)

Ամբողջ քառասունըութը ժամ, եղական ու արտառոց ընթացք մը ունեցաւ պառնըր, նաւաստիներուն ալ հետաքրքրութիւնը չարժեղու աստիճան:

Այդ միջոցին, սպասաւորներուն պետը Ալպէրդ՝ եկաւ գտաւ զիս, անգամ մըն ալ զիս վկայ բռնելու համար իր սիրային վընտին: Օգոստոս 15ին, Աստուածածնայ օրը, խեղճ երիտասարդը Մառի Օտօի տօնախմբութիւնը չնորհաւորած էր, փափկօրէն զգացնել տալով անոր՝ զինքը լափող սէրը: Բայց անդրդուելի սենեկապանուհին բաւականացած էր ժպտելով և խնդրած էր անկէ: Թրանսայի ծաղիկներու փունջ մը: Տարաբաղդ տղան յուսահատ նայուածք մը պտտացուցած էր ծովուն ամայութեանը վրայ. ոչ ֆրանսական ծովեզերք մը կընդնչմարուէր և ո՛չ ալ վարդի մը հետքը: Արեւէն ու մէգէն խանձած իր բիրտ դէմքին վրայ դառնութիւն մը նկարուած էր որ ցաւ կը պատճառէր:

Շօգենաւին մէջ սէրը չէր միայն որ կը տիրապետէր. բամբասանքն ալ ծայր տուաւ առտու մը: Աննչան պարագայ մըն է ասիկայ, զոր երկու բառով պիտի պատմեմ՝ բան մը պակաս թողած չըլլալու, համար տպաւորութիւններէս: Չարախօսին մէկը լուր տարածեց թէ պառնուհին ճաղատ-զըլուխ էր և կեղծամ կը գործածէր:

Առանց իմ բժշկական արուեստիս գաղտնապահութեան դէմ մեղանչելու, կ'ուզեմ ձեռք պատմութեան այս փափուկ ու կարեւոր կէտը:— Առիթ ունեցայ տիկին տը կռաւալի մօտենալու՝ իր մաղային դրութեան վերաբերեալ խնդրի մը համար և կրնամ յայտարարել թէ ճաղատ ըլլալէ հետո էր, ընդհակառակը՝ բնութենէն օժ-

տուած ըլլալով սիրուն ու նուրբ մաղերով որոնք կարճ էին և սակայն շատ կը վայ. լէին իրեն: Զլմարտութիւնը ամբողջ ըսելու համար պէտք է աւելցնեմ թէ քանի մը տարի առաջ ջերմէ բռնուելով հարկադրուած էր բաւական ատեն զրկուիլ իր առատ մաղերէն — ինչպէս պատմեց տիկին Մառի Օտօ — բայց հիմակ բնութիւնը վերստացած էր իր իրաւունքները և տիկին պառնուհին գլուխը զարդարող խոպոպիկները նոյնքան վաւերական են որքան գեղեցիկ:

Կ'երեւայ թէ իմ յարաճուն կասկածներս անզգալաբար փոփոխած էին վարմունքս՝ պառնին նկատմամբ: Այն օրէն ետքը, ուր վտանգաւոր դեղերու դէզ մը ծով նետած էի, Պ. տը կռաւալ ալլեա ինծի հետ առջի մարդը չէր: Նախ, ինչպէս ըսի արդէն, իր խցիկը առանձնացաւ, չուղելով որ մարդ մօտենայ իրեն: Բնաւ չէր հետաքրքրուէր շոգենաւի կեանքով, անգամ մը միայն լուր զրկելով նաւապետին՝ թէ ո՛ւր տեղուանքը կը գտնուէինք: Խստաբարոյ Նիւթըն Բօուիս, առանց մանրամասնութեանց մէջ մտնելու, լայնութեան ու երկայնութեան աստիճաններուն վրայ տեղեկութիւն հաղորդեց անոր, բայց չըսաւ թէ ուղղակի դէպի Մասէյսօ կը նաւարկէինք:

Դաշնակը լուռ կը մնար ալլեա, պառնուհին չէր երգեր, Մառի Օտօ հաղիւ երբեմն կ'երեւար կտմրջակին վրայ. ծովը միապաղաղ ու ամայի էր, նաւապետը լուռ և ես ինքս ալ հոգիիս մէջ տարտամ բան մը կըզգայի:

Այսպէս երկու երեք օր չէզոք կեանք մը անցուցինք որու միջոցին Գաթարբեմն ուղղուեցաւ դէպի անթափանցելի հորիզոններ:

Երկրորդ օրը, վերջալոյսին, կամրջակին վրայ տեղի ունեցաւ մէկը այն միջադէպերէն որոնք արագ ու կարճատեւ ըլլալուն համար՝ աւելի տրամադիրական կը դառնան։ Ովկէանոսին հանդարտութեան մէջ կը յառաջանայինք, և նաւապետը՝ իր տեղը օգնականին թողլով՝ դէպի խցիկները տանող սանդուխը կ'իջնէր, երբ իրեն պատահեցայ, և զինքը բարեւել ուղած միջոցին՝ քիչ մնաց ոտքս սահէր և իյնայի պարաններս դէզի մը վրայ զոր չէի տեսած։ Հոն, նաւապետին հետ ունեցանք մէկը այն հանդարտիկ ու միտքը հանգստացնող խօսակցութիւններէն զոր վայելք մըն է ունենալ փորձառութեան խիստ դասերէն հասունցած բնաւորութեան տէր մարդոց հետ, թէպէտ իրենց սովորական ու սահմանափակ միջավայրին մէջ միայն ճանչցած ըլլան մարդերն ու իրերը։

Յափրացած փիլիսոփայի մը ձեւով, Նիթըն Գօուիս բացատրեց ինձ իր յաւիտենական ճամբորդողի հաճոյքը և այն գոհունակութիւնը զոր կըզգայ բաց ծովին մէջ ապրելով՝ հեռու ճղճիմ խնդիրներէն որոնք կը զբաղեցնեն մարդկութեան մնացեալ մասը, Ու երջանիկ կ'ապրէր, երկնքին ու ծովուն մէջտեղ։

Պիտի պատասխանէի իրեն որ եթէ այդ կեանքը պիտի չանցնէր, առանց միօրինակութեան ալ չէր, երբ... երկուքս մէկանց նշմարեցինք, ծխարանին ետեւէն, Պ. տը Կռավալը որ՝ պրկուած և գունատ դէմքով այնպէս կը դիտէր զմեզ, իբր թէ մեր մտածումները կարդալ ուղէր մեր չրթունքներուն վրայ։

Շոգենաւին մէջ շարունակ զիրար տեսնելուս պատճառաւ, այլեւս աւելորդ քաղաքավարութիւն մը կը սեպէինք բարեւելիքը կամ մասնաւոր ուշադրութիւն մը ընծայել՝ ամէն անգամ իրեն հանդիպելուս։ Եւ պատճառ մը չունէինք, նաւապետը ու ես, այս անգամ տարբեր կերպով վարուելու։ Ընդհակառակը, շարունակեցինք մեր շահեկան խօսակցութիւնը, Նիթըն Գօուիս ինձի կը պատմէր նաւազի կեանքին երջանկութիւնը։

Ներք, դժբաղդութիւնները, իրենց պարզութեանը մէջ աղբեցիկ էին իր խօսքերը, երբ յանկարծ նշմարեցինք որ մարդ մը դէպի մեր կողմը կը վազէր, թեւերը տարածած, բերանը բաց։ Պ. տը Կռավալն էր, քիչ մը առաջուան երեւոյթէն աւելի՝ դալկահար։ Բայց, դեռ մեզի չհասած կանգ առաւ, ճիգ մը ըրաւ ինքզինքը զսպելու համար, դէմքին արտայայտութիւնը փոխեց եւ ժպտուն դէմք մը առաւ։

Այս ձեւափոխութիւնը այնքան արագ եղած էր որ նաւապետը և ես ապշահար մնացինք։ Բայց պառնըր մեր զարմանքը չնշմարել կեղծեց, ու բնական ձայնով մը մեր որպիսութիւնը հարցուց։

Սիկանիս վառեցինք, քանի մը աննշան խօսքեր փոխանակեցինք ու հեռացաւ։ Բայց, անմիջապէս յետոյ ետ դառնալով.

— Ո՛ւր տեղուանքը կը գտնուինք, նաւապետ, հարցուց։

— Վաղն իրիկուն Մասէյձոն պիտի տեսնենք, պատասխանեց Նիթըն Գօուիս։

— Լա՛ւ, յարեց Պ. Կռավալ։

Եւ երբ ինքը հեռացաւ, նաւապետը զիս դիտեց և ապահով եմ որ, երկուքնիս ալ այդ վայրկեանին միեւնոյն մտածումը ունեցանք, թէ պառնըր այնպէս երեւակայած էր որ իր մասին մեր ունեցած կասկածները կը յայտնէինք իրարու, եւ թէ յանկարծական որոշումով մը դէպի մեր կողմը եկած էր... իր կեանքին գաղտնիքը պարզելու համար մեզի։

* *

Երբ Պ. տը Կռավալ այս տարօրինակ դիրքին մէջ կը գտնուէր, նոր կորսնցուցած էինք մեր տեսողութենէն Ֆէրնանտօ կղզին ուր Պրազիլեան կառավարութիւնը բանտեր կառուցանել տուած է եւ ուր կը զրկէ չարագործները։ Թէեւ պարզ զուգադիպութիւն, բայց թիարանի մը այս դրացնութիւնը եւ պառնին պահ մը առաջուան անաբեկումը հետաքրքրաշարժ չէ՞ք գտեր։ Սոսկումով կը մտածեմ այսօր, թէ կրնար ըլլալ որ այդ վայրկեանին Պ. տը Կռավալի խօսք բանայի Ֆէրնանտօ կղզիին թիարաններուն վրայ։

(Շարունակելի)



CRÉDIT LYONNAIS ԴՐԱՄԱՏՈՒՆԸ ԻՐ ՆՈՐ ՇԵՆՔԻՆ ՄԷՋ

Նախորդ շաբթուան Մասիսի «ոչ-գրական» կամ «գործնական» բաժինին մէջ ակնարկ մը նետած էինք Սինկէր Ընկերութեան Ցուցահանդէսին վրայ, որ այնքան կը հետաքրքրէ նաև մեր ընթերցողները: Այս անգամ, միեւնոյն բաժինին մէջ պիտի խօսինք սեղանաւոր ու վաճառական դասին և առհասարակ բոլոր դործի մարդոց ուշադրութիւնը գրաւող հաստատութեան մը՝ Բրէտի Լիօնէին վրայ, որուն փոխադրութիւնը իր նոր շէնքին մէջ (Բարաքէօյ Սէնի-նան) ուշագրաւ դէպք մըն է Ղալաթիոյ հրապարակին համար: Կեդրոն վայրի մը մէջ գտնուող այդ մեծ խանը, յարակից երկու շէնքերու միացումովը աւելի՛ ընդարձակուած, ո՛չ միայն Բրէտի Լիօնէի նախորդ շէնքին կրկինն չափ տեղ կը զբաւէ, այլ և իր ճաշկաւոր ու նպատակայարմար բաժանումներովը և յարդարումովը լիովին կը համապատասխանէ այդ համբաւաւոր Դրամատան յորձանոսութեանց պէտքերուն, թէ՛ հանրութեան և թէ՛ իր պաշտօնէութեան տեսակէտով:

Պ. Blanchenay, Բրէտի Լիօնէի համակրելի Ընդհ. Տնօրէնը, ինք անձամբ ծրագրած, կարգադրած էր ամէն բան, ձեռնհասօրէն հսկելով տեղաւորման գործին, որուն առթիւ շնորհաւորութիւններն ընդունեց սեղանաւորական այդ մեծ Հաստատութեան հետ յարաբերութեան մէջ եղող ականաւոր անձերու, և կը շարունակէ տակաւին լսել գնահատական արտայայտութիւնները զանազան դասակարգի այցելուներու և մամուլի ներկայացուցիչներու որոնք կը փութան երթալ պատիւ Դրամատան նոր շէնքը, իր ամէն մասերով:

Ամփոփ գաղափար մը տալու համար մեր ընթերցողներուն, սկսինք նախ ստորնայարկէն կամ ամրակուռ և ընդարձակ նկուղէն ուր հաստատուած է Գանձարանը, ապահովութեան ամէն պայմաններով: Հոն է որ ի պահ կը դրուին Բրէտի Լիօնէին դրամները, արժեթուղթերը, ինչպէս նաև հոն հաստատուած են հասարակութեան վարձու տրուած Դրամարկի դարակները: Այս Գանձարանը ու դարակներու պահարանը երբեակ թանձր պատերով պատսպարուած են, որոնց մէկը

պողպատեայ և միւս երկուքը քարէ՝ եւ աղիւսէ: Դրամարկիները խուսբ խուսբ են, իւրաքանչիւրը ուրոյն դուռներով պաշտպանուած. իսկ Գանձարանին մուտքը աւելի զօրաւոր ու մեծագոյն դուռով մը ամրացուած: Գողութեան ու հրդեհի պատահականութիւններն ալ մտածուած են իմաստուն կանխատեսութեամբ մը, թէ՛ գիշերային պահակներու հսկողութեան անցքեր թողուած ըլլալով եւ թէ՛ վերնայարկը գտնուող մեծ աւազանով մը որու խողովակներուն միջոցաւ կարելի է անմիջապէս ջուրով լեցնել Գանձարանին շուրջը ձգուած պարպ միջոցը:

Այս ծանօթութիւններէն ետքը, հարկ է աւելցնել թէ՛ դրամ, արժեթուղթ ու ծանրագին առարկաներ այդ Գանձարանի դրամարկիներուն մէջ ի պահ դնել ուզողները որքան ապահով կրնան զգալ ինքզինքնին: Բրէտի Լիօնէն 38,000 ոսկիի չափ ծախք ըրած է իր այս նոր installationին համար, որուն մեծագոյն մասը յատկացուած է այս ամրափակ ստորնայարկին:

Յետոյ, կարգը կուգայ առաջին յարկին, ուր կը գտնուին Սակարանի գործառնութեանց ճիւղ, Մետուկ, Տնօրէնութիւն, հիւրասրահ եւ այլն: Այս ընդարձակ յարկին մէջ է որ պիտի երթեակէ հասարակութիւնը իր առօրեայ գործառնութեանց համար: Վրայի երեք յարկերը յատկացուած են թղթթակցութեանց, հաշուակալութեան, տեղեկատուութեան, տեղեկութեանց, կտրոններու գանձման եւ այլ ճիւղերու: Զօրրորդը՝ մաստակարարութեան, ջրաբաշխութեան: Նոր շէնքը օժտուած է նաեւ ելեկտրական լոյսի մեքենայով մը եւ քալօռիֆէռի յատուկ ջերմութեան բաշխիչով մը:

Բռէտի Լիօնէի Տնօրէնութեան կողմէ եւ զած նիւթական մեծկակ զոհողութիւնը, իր նոր շէնքին մէջ հաստատուելուն առթիւ, նոր ապացոյց մըն է իր վայելած վարկին ու վստահութեանը՝ Պոլսոյ հրապարակին վրայ եւ իր գործառնութեանց զգալապէս ընդարձակուելուն, որուն համար նորանոր դիւրութիւններ կընծայէ հասարակութեան:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
Տէր եւ Տճօրեհ—ՏՈՒԹ: ՆԻՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ
Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի



ՌՕՍԻԱ-ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՀ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի կայս. Ուժազուժ արտոնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ չէնք

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի
ՀՐԴԵՀԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱԴՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾՆԵՐՈՒ ԴԵՄ,

ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կառուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,666 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

149,852,000 »

Ընկերութեան ապահովագրուողներուն վճարուած դրամա-

գլուխ եւ վնասուց հատուցում

355,840,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տուցս

64,553,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան
թան, Վոլփստա, Ղալա թիւ 9-10

ԱՌԻԹԵՆ՝ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հ Ե Ր Ճ Ա Յ Ի



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Հէրճայի վաճառատունը՝ գտնուող Երեւան, ասիկ եւ ամեն շրջանում, գտնուի
պատի եւ քոնսլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ, իր բազմաթիւ լաճա
խորդներուն վաճառութիւնէն քաջալերուած՝ այս անգամ կը փութալ լաւագոյն թէ ա
մէն եղանակի լաւակ վերջին նորաձեւութեան վրայ պատշաճ ունի արանց, կանանց
եւ աղայոց համար ամէն տեսակ հագուաներ, ու անձեւի համար մուշակաւ վերարկու
ներ, նաեւ ճերմակեղէններ, ֆանթազիներ եւ թափշներ ու ամենակեան կօշիկներ: Ունի
նաեւ կահկարասի, ձեղունի լամպաներ, մանկալոյսներ, եւրօպական ու անգլիական գործ
քեր, գետնի մուշամպաներ, կրտսեղաններ ու պիտիք էջներ՝ ամենավերջին կառարելու
թիւններով:

Հէրճայի վաճառատունը իրականապէս ու լաւօրէն շահած է հանրութեան
վաճառութիւնը եւ գտնուողութիւնը իր ապրանքներուն ազնուութեան եւ անկեղծ
մաքրութեան, ճշգրտութեան եւ ամենալաւ համար:

Աս ամէնուն օրոյն առժեքին վաճառումն է

ԱՊՐԱՆԱՆԻՆ

Միայն թէ գնն ու ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկ մնացեալ գումարին հա
մար շտաբակով հարիւրին 5 վճարմամբ պարտաւ է հալթալթել:

Վաճառատունն հաստատուած է

ՄԵՄ-ՇՈՒԿԱՅ. ՈՍԿԵՐՁԱՅ ՄԵՄ ՓՈՂՈՑ ԹԻՒ 13

Անգամ մը ուրեւել բաւական է հաւաքուելու համար թէ՛ Հէրճայի անոցելի կաշի
մակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գտնուելու իր ամէնէն դժուարեան լաճախորդները
Կանխիկ գնողներու ցամաք հարիւրին 5 զեղչ:

Սակարկութիւն չկայ:

Շտաբակով վճարմանը համար հաւաքուելու մէջ ապարտաւ են:

ՆԱԶԱՐԵԹ ԽԱՉԷՐԵԱՆ

ԳԱՍՏԱՐԱՆ

Պոլիս: Մարտի 6-ը, 1906 թ. Գարնարան խան
Թիւ 26

Աժէն հարգի գաւեր հը սառնանէ եւ
խնորայ տաւրիայ եղած դարձերու համար
թէ բերանացի եւ թէ՛ թղթակցութեամբ
բանակցութիւններ հը հաւարէ եւ հարձից
հը յայտնէ: Կը խմբագրէ եւ կը թարգմանէ
գրութեաւ եւ տանտնաւորի տն ու տնտեսական
պայմանագրութեան վերաբերող թուղթեր:
Ուրբաթ օրերը մինչեւ հէս օր ձգիւս:
Բար խորհրդակցութիւն հը հաւարէ եւ հար-
ձից հը յայտնէ:

Ապակեղապարակ տնտեսութիւններու
եւ ի մասնաւորի կեանքի ապակեղապարակ տն
ընկերութեան նկատմամբ անհրաժեշտ եղող
տեղեկութիւնները ձգեալաբար հաւատարմ:

Կը, տնտեսարարէ օր մինչեւ օր այս մասին հո-
րեւոր եղած տեղեկութիւնները իրմէ չտալու
ուրիշ, ապակեղապարակի չի տարագրութիւն
Ապակեղապարակ տնտեսութեան հաւատարմութեան
մասին եւ փոխարժեքներու գումարման
ներ հը սառնանէ:

6—10

ԴԵՐՁԱԿ

ՎԻՉԷՆ ԱԼԱՃԱԵԱՆ

Ղալաթիա, Հարանք փողոց, թիւ 13

Լաւ տեսիլ էր պատկերող ու ձեւաւոր
հաշուաւոր պատրաստել տալ ուղղութեամբ, ու-
րեք միանգամայն տնտեսութիւն հը փոխ-
ան եւ վճարման գիւրքի պայմաններ, կըր-
նան գիտել այս նոր բացուած խանութը, եւ
մեծագէտ դոկտոր մեռն:

6—10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է՝ լաւ մեքենայ մը աւելի եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ի

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռ էի, ոտի ու ոտի եւ ձեռի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ։

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՇԱՐԲԱՐԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | | |
|---------|---|--|
| ԲԵՐԱ. | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին. |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ. | } | 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Դարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԱԻԻՏԱՐ | | Զարչը Պօյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարեալ երաշխաւորութիւն։

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը։

9—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ. ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ դատ, մասնագիտաբար եւ երկար տարիներէ ի վեր կը դարմանէ առամօքօի, աղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, ջիւային անկարողութիւնները, հիւն եւ նոր գաղիւկան երեւոյթները։ Այս վերջին տխուրէր առանց առամօքօի խանգարման եւ նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ։

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ վերջը։ Զօրեքլարթի օրերը միայն ձրի։ 9—10

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Արանց եւ կռնանց ճաշակաւոր հոգեւորներու Պալիս, Սուլթան—Համամ, Մի. Խլիի Դամասկոսի դէմ Թի. 58.

Սոյն վաճառատան մէջ գտնուած աղբիւրները, արանց ու կռնանց յառակ հիւանդներ, իրենց գեղեցիկութեան կը միացնեն առօրեականութիւն, եւ դիւրամտելի գիւնջու առօրեականութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան։

Աղամ վարդաւան մեծազէն գոթաղբիւրն է իր բազմաթիւ յաճախորդները։ 6—10